ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻԼՎԻ ԷՅ ՋԻ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքում՝ Տերտերասարի ոսկու հանքավայրում, օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման վերաբերյալ առաջին հանրային քննարկում

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Լիճք *18.10.2024*

2024թվականի հոկտեմբերի 18-ին՝ ժամը 16:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՍԻԼՎԻ ԷՅ ՋԻ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքում՝ Տերտերասարի ոսկու հանքավայրում, օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման վերաբերյալ հանրային քննարկում:

Քննարկումը վարում էր Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Անտոնյանը, ներկա էին «ՍԻԼՎԻ ԷՅ ՋԻ» ՍՊԸ-ի սեփականատեր և տնօրեն Ս. Համբարձումյանը, ՇՄԱԳ նախագծող, բնապահպանական խորհրդատու Զ.Զուռնաչյանը, Լիճք բնակավայրի վարչական ղեկավար Հ.Հովհաննիսյանը և համայնքի բնակիչներ (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Անտոնյանը:

Այնուհետև ներկայացրեց հանրային քննարկումը նախաձեռնող կողմին և խոսքը փոխանցեց Զարուհի Զուռնաչյանին:

Զ.Զուռնաչյանը ողջունեց ներկաներին և տեղեկացրեց, որ հանրային քննարկումը կազմակերպվել և իրականացվում է համաձայն ՀՀ Կառավարության՝ 2024թվականի 2343-Ն որոշման դրույթներին համապատասխան, ինչի հիման վրա կատարվել է պատշաճ ծանուցում, հայտարարությունը տպվել է նաև «Առավոտ» օրաթերթում:

Զ. Զուռնաչյանը մեջբերեց, որ համաձայն ՀՀ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ բոլոր հանքավայրերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ 1 փուլով, 2հանրային քննարկման իրականացմամբ:

Զ.Զուռնաչյանը հավելեց, որ այսօրվա հանրային քննարկումը (առաջին փուլ) վերաբերվում է՝ հանքավայրի հնարավոր ազդեցությունների նախնական

գնահատմանը, ինչպես նաև ընկերության նախնական համաձայնություն ստանալուն:

Կառավարության որոշման համաձայն և ավագանու նախնական համաձայնությունը ստանալուց հետո ընկերությունը կսկսի իր նախագծային աշխատանքները:

Համաձայն ներկայացված նախագծի՝ ինչպես նախկինում, այնպես էլ ներկայիս դրությամբ՝ հանքավայրի շահագործումը կիրականացվի ստորգետնյա եղանակով:

Ընկերությունը նախատեսում է հիմնական աշխատուժը ներգրավել խոշորացված համայնքից կամ վարչական տարածքից, նաև համայնքում կիրականցվեն սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր, սահմանված չափով ներդրումներ կկատարվեն համայնքի բյուջեում:

Այնուհետև սկսվեց հարցուպատասխան.

Լիճք բնակավայրի վարչական ղեկավար Հ.Հովհանիսյանը հետաքրքրվեց, թե արդյոք ընկերությունը պատրաստ է հարկեր վճարելուց զատ՝ անձնական միջոցներով, օգնել գյուղի բնակիչներին, նաև աջակցել նրանց լուծել տարատեսակ խնդիրները:

Ս.Համբարձումյանը հավաստիացրեց, որ մինչ այժմ էլ օգնել և պատրաստ է մշտապես աջակցել:

Քննարկման ընթացքում ներկաների կողմից հնչեցին զովեստի և շնորհակալական խոսքեր, բարձրաձայնվեցին համայնքին, բնակավայրին առնչվող մի շարք առաջնային խնդիրներ, որոնց ի պատասխան՝ Ս.Համբարձումյանը խոստացավ հնարավոր ամեն բան անել և սատար լինել համայնքին:

Քանի որ այլ հարցեր, առաջարկություններ, դիտողություններ չհնչեցին Ա.Անտոնյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և նիստը համարեց փակված:

Հանրային քննարկման պատասխանատու,
Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա.Անտոնյան

Նախաձեռնողի ներկայացուցիչ՝ Ս.Համբարձումյան